Digitally signed by GRIGORYAN GAYANE 1311750075
Date: 2023.09.04 12:58:08 AMT

Գեղանուշի միջնակարգ դպրոց

2023 – 2024 ուստարի

8-րդ դասարանի դասղեկի

տարեկան աշխատանքային

ՊԼԱՆ

Դասղեկ Ն. Աղասյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)_ 8-րդ դասարանում սովորում են 6 աշակերտ՝ 3 տղա, 3 աղջիկ: Բավականին ակտիվ և խելացի աշակերտներ են, ցուցաբերում են լավ վարքագիծ:Ունեն սպորտային և երաժշտական ունակություններ:Ակտիվ մասնակցում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Ձևավորված է առողջ և միահամուռ կոլեկտիվ:
2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում-ներկայացվում է միջոցառումների օրացույցային պլանի աղյուսակ: Պետք է իրականացվի հայեցի, գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, սպորտային, աշխատանքային,քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ, բաց դասեր, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ, աշակերտների հայացքների, մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր: Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինքնուրույնության նախաձեռնում, հանդուրժողականության արտահայտում:
3. Հայեցի դաստիարակություն

3.1-Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց: Հայրենիքը սկսվում է տնից, հողից, ջրից: Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն, մեր ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, մշակույթը, ազգային նվաճումները, հայտնագործությունները:

3.2- Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողի համատեղ գործունեության գործընթաց է, որը ձևավորում է գեղագիտական կուլտուրա: Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը, էքսկուրսիաները և այլն:

3. 3-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն. Հայրենասիրությունը դա սերն է հայրենիքի, սեփական երկրի նկատմամբ: Դա հոգատարությունն է հայրենիքի հանդեպ և հանուն հայրենիքի սեփական անձի զոհողությունն է: Պետք է հարգել և սիրել մեր հայրենիքը:

3.4- Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական և ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը, հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

3.5-Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը: Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

3.6-Բնապահպանական դաստիարակություն. Նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Պետք է անձի մեջ դաստիարակել, որ բնությունը ազգային հասարակական հարստություն է, որը պետք է պահել խնամքով:

4.Դպրոց-ընտանիք կապը-ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից:Այդ համատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ

միասնական պահանջների մշակում: Ծնողներին պետք է ներգրավել դպրոցականաշխատանքների կատարմանն ու կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	Թեման
1.	Եկեք զրուցենք
2.	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ:
3.	Կածրատիպերի առաջացման պատճառները:
4.	Հիմնավոր ընդանրացումների կատարում:
5.	Խտրականություն:
6.	Ինչ է խտրականությունը:
7.	Խտրականության տեսակները:
8.	Դ.Դեմիրճյանի “Ավելորդը”:
9.	Հ.Թումանյան “Իմ ընկեր Նեսոն”:
10.	Ա.Այվազյան”Բժիշկը,որ նախ իրեն բուժեց”:
11.	Սեռային խտրականության օրինակ “Միակ դուստրը”:
12.	Դրական խտրականության օրինակ:
13.	Հայտնի հայ մարզիկները:Ուժեղ լինել,նշանակում է...
14.	Անհատի բարեկրթությունը:
15.	Անհրաժեշտ գիտելիքներ երկրաշարժից պաշտպանվելու համար:
16.	Ամանորյա միջոցառման նախապատրաստում:
17.	Ճանաչենք մեր հայրենիքը:
18.	Ինչ են պատմում ընտանեկան լուսանկարները:

19.	Իմ երկրի պատմության հերոսական էջերը:
20.	Արցախյան հերոսամարտի ընթացքում ծնված երգերը:
21.	Իմ սիրած երգերը:
22.	Աշխատանքը ազնվացնում է մարդուն:
23.	Ինչպես հասնել հաջողության:
24.	Դպրոց ուսումնական դարբնոց:
25.	Վատ և լավ սովորություններ:
26.	Իմ հետաքրքրություններին ու նախասիրությունները:
27.	Լավ մարդիկ ավելի շատ են:
28.	Սիրո և հավատարմության մասին:
29	Ինչպե՞ս պահպանել Երկիր մոլորակը
30	Պատերազմ տեսած մանուկները
31	Եթե ես կարողանայի
32	Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը
33	Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը
34	Իմ կատարած լավ գործերը

Հ/Հ	Աշակերտի տվյալներ	Ծննդյան տարին, ամիսը, օրը	Ծնողի անուն, ազգանուն	Բնակության հասցե/գրանցման և փաստացի/	Ծնողների հեռախոսահամար
1	Բաղալյան Անահիտ Մարտունի	2010-11-18	Սողոմոնյան Գայանե Յուրիկի	գ.Գեղանուշ, կենտ. փող.տ.40	077-08-27-33
2	Էլչյան Նունիկ Երջանիկի	2010-05-26	Խալապյան Փառանձե Յուրիկի	գ. Գեղանուշ, Ներքին թաղ. տ.7	093-74-68-71
3	Հակոբյան Մանե Արթուրի	2010-08-26	Նազլուխանյան Լիանա Ռուբենի	գ. Գեղանուշ,կենտ. փ. տուն 10	094-53-17-83
4	Համբարձումյան Ալբերտ Ռոբերտի	2010-09-29	Առաքելյան Աիդա Սամվելի	Դավիթ Բեկ շ.8,բն.76	098-15-79-99
5	Հարությունյան Էմիլ Էդուարդի	2010-02-24	Աղասյան Նարինե Սերգեյի	ք. Կապան, Ա. Մանուկյան, 1-ին նրբ. 2/62	094-73-78-42
6	Մարգարյան Արա Գարիկի	2010-08-17	Սարուխանյան Նարինե Արտուշի	ք. Կապան, Շահումյան 22/15	093-16-29-45

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Կատարման Ժամկետը
1	Դպրոց հաճախելու կանոններ՝ համաճարակային իրավիճակից ելնելով:	դասղեկ	սեպտեմբեր
2	Կատարել լուրջ դաստիարակչական աշխատանքներ ազգային ոգով դաստիարակելու, գեղագիտական ճաշակ զարգացնելու:	դասղեկ	տարվա ընթացքում
3	Հրավիրել ծնողական ժողովներ, որտեղ ներկայացվեն աշակերտների և ծնողների հետ կատարվելիք աշխատանքները:	դասղեկ, ծնողներ	ամիսը 2 անգամ
4	Աշխատանքներ կարգապահական խնդիրներ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ:	դասղեկ, ծնողներ	յուրաքանչյուր ամիս
5	Այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ և տարիքին համապատասխան թատրոններ:	դասղեկ, աշակերտներ	մարտ, ապրիլ
6	Համագործակցել առարկայական ուսուցիչների հետ, քննարկել առաջադիմության հարցեր:	դասղեկ	տարվա ընթացքում
7	Ցուցաբերել օգնություն սոցիալապես անապահով երեխաներին:	դասղեկ, աշակերտներ	տարվա ընթացքում
8	Հաճախակի կատարել դասալսումներ:	դասղեկ	ամեն ամիս
9	Ցերեկույթի կազմակերպում և անցկացում:	դասղեկ, աշակերտներ	մայիս
10	Յուրաքանչյուր ամսվա վերջում ամփոփել առաջադիմությունը և կարգապահությունը:	դասղեկ	յուրաքանչյուր ամիս

Դասարանի կանոնակարգը

1. Աշակերտը պարտավոր է չբացակայել և չուշանալ դասերից:

2. Եթե խիստ հարգելի պատճառով բացակայությունը կամ ուշացումը անխուսափելի է, ծնողը պարտավոր է նախապես տեղեկացնել դպրոցի տնօրենությանը

3. Աշակերտը ուստարվա ընթացքում՝ մինչև մայիսի 1-ը, 20-30 օր կամ 120-200 ժամ դասերից բացակայելու դեպքում հանձնում է քննություններ ուսումնական պլանով նախատեսված առարկաներից: Քննություններից անբավարար գնահատական ստացած կամ 200 ժամից ավելի բացակայած սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

4. Աշակերտը պարտավոր է դպրոց մտնելիս անջատել բջջային հեռախոսը և այն միացնել միայն դպրոցից դուրս գալուց հետո: Կարգը խախտելու դեպքում հեռախոսը կվերցվի և կվերադարձվի ծնողին:

5. Դպրոցի միջանցքներում և դասասենյակներում պահպանել մաքրություն :

6. Ուսումնական պարապմունքներից սովորողի հաճախակի անհարգելի բացակայության համար պատասխանատվություն է կրում ծնողը՝ օրենքով սահմանված կարգով /Հ.Մ.Օ. գլուխ 5 հոդվ. 6/:

7. Ծնողը, ըստ Հ.Մ.Օ. գլուխ 5, հոդված 28,5,6,7,8 կետերի պարտավոր է

* հարգանք դաստիարակել ուսումնական հաստատության և մանկավարժների նկատմամբ

* համագործակցելով ուսուցչի հետ՝ վերահսկել տնային աշխատանքների կատարումը

* ապահովել սովորողի աշակերտական պատշաճ տեսքը,սանիտարական հիգիենան,պայուսակը և գրենական անհրաժեշտ պարագաները, արգելվում է շպար և արդուզարդ

* պատշաճ պահպանել դասագրքերը ուստարվա ընթացքում, իսկ կորցնելու դեպքում հատուցել գրքի արժեքը

* հատուցել իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը

* սովորողին զերծ պահել ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված իրերի օգտագործումից:

Ծնողական ժողովների օրակարգեր

Օրակարգային հարցեր 1 – Սեպտեմբեր

1. 2023-2024 ուստարվա ծնողկոմիտեի ընտրություն:
2. 8-րդ դասարանի առարկայացանկում ընդգրկված նոր առարկաների ուսուցումը ճիշտ կազմակերպելու մասին:
3. Սովորողների առաջադիմություն և կարգապահություն:
4. Դասագրքերի վարձավճարի մասին:

Օրակարգային հարցեր 2 – Դեկտեմբեր

1. Առաջին կիսամյակի ամփոփում:
2 .Ուսուցիչների կարծիքը դասարանի աշակերտների մասին:
3. Պահպանել դպրոց-ընտանիք փոխադարձ կապը:
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգային հարցեր 3 – Մարտ

1.Հունվար-փետրվար ամիսներին սովորողների առաջադիմությունը և կարգապահությունը:
2.Դեռահասի վատ սովորությունները (զեկույց):
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգային հարցեր 4 – Մայիս

1. Տարեկան առաջադիմության ամփոփում:
2. Արտադասարանական էքսկուրսիայի կազմակերպչական հարցերի քննարկում:
3. 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքների ամփոփում:
4. Դասագրքերի հանձնում: